

Մ Ի Ս Ա Կ Ա Ն

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՆՈՐՀՆԷՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԷՁ Երկու Նկատողություններ

Դոկտ. Զաւէն Ա. Քինյ. Արզումանեան՝

Սուրբ Ծննդեան Քրիստոսի Սկրտութեան Ջրօրհնէքի առիթով կ'ուզեմ անդրադառնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ անցեալ Սեպտեմբերին կայացած հանդիսաւոր Սրբալոյս Միւռնի Օրհնութեան՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Իսկապէս տպաւորիչ սոյն հոգեպարար հանդիսութիւնը կատարուեցաւ մեծահանդէս շուրջով, մասնակցութեամբ Երուսաղէմի Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի և բազմերանգ բարձրաստիճան Արքեպիսկոպոսներու՝ հայ և յարանուանական: Ներկաներ հոգեկան գոհունակութեամբ մասնակցեցան, բազմահագարներ ալ դիտեցին պատառներու վրայ իսկական հիացումով Հայ Եկեղեցւոյ յատուկ Միւռնօրհնէքը:

Հետեւեալ երկու նկատողութիւնները, (դիտողութիւններ չհասկցուին) ուզեցի յայտնել որպէս ուսուցողական մեկնակէտներ, շեշտելով ՋՐՕՐՀՆԷՔԻ առանձնաշնորհեալ կարգը, զոր միայն կը կատարենք Յունուար 6-ին ի յիշատակ մեր Տիրոջ Սկրտութեան:

Առաջինն է «Հին» Միւռնի հեղումը «Նոր» Միւռնին մէջ: Ամէն բանէ առաջ «Հին Միւռն» չկայ, և ամէն անգամ որ կ'արտասանենք «Հինը», նոյնիմքն Միւռնօրհնէքի Ս. Խորանէն, «Նոր Միւռնին» մօտ զայն աստիճան մը արժեգրկած կ'ըլլանք, նոյնիսկ եթէ ըսուի թէ որակի խնդիր չկայ, այլ ժամանակահատուածի մասին է խօսքը: Չենք անդրադառնար որ նոր միւռնին քով հինը երկրորդական կ'իմացուի առ հասարակ, և անոր նորոգութեան պէտքը կը զգացուի, առանց գիտնալու որ այդ «Հին» կոչուած Սրբալոյս Միւռնը հարիւրաւոր անգամներ օրհնուեր է, և հնագոյն դարերէն ժառանգուած ԱՄԵՆՆՕՐՀՆԵԱԼ Սրբալոյս Միւռնն է: Դարերու թելադրանքն է որ «Հինին» փոխարէն զայն կոչենք ԱՆՅԵԱԼԻ Միւռն, որ կը միախառնուի ՆԵՐԿԱՅԻ Միւռնին հետ, ԱՊԱԳԱՅԻ շնորհները փայլատակելով: Այսպէս կը հասկնանք Առաքելական Յաջորդականութեան իսկութիւնը:

Հոս հարկ է շեշտել Առաքելական Յաջորդականութեան եկեղեցական կանոնական իրաւակարգը, ինչպէս Առաքելներէն ձեռնադրութիւնները հասան մեզի եպիսկոպոսներու ձեռքով, նոյնպէս Ս. Գրիգոր Լուսաւորչի Առաջին Միւռնի օրհնութիւնը հասաւ մինչեւ մեր օրերը: Ժամանակահատուածի և Յաջորդականութեան իրողութեամբ է որ Սրբալոյս Միւռնը կ'օրհնուի ու իր վաւերականութիւնը կը ստանայ Սուրբերու Մատուցներու կրկնակի օրհնութեամբ, և մանաւանդ անցեալի բազմաթիւ Հայրապետներու օրհնած և ժառանգած



FIG. 58. EDGMIATSIN: CEREMONY OF THE CONSECRATION OF THE KATHOLIKOS—ANointing WITH OIL FROM THE BEAK OF A GOLDEN DOVE.

1901թ. Ս. Միւռնով կաթողիկոս կ'օծուի Խրիմեան Հայրիկ

ու սերունդներուն հրիտակած ԱՆՅԵԱԼԻ ՄԻՒՌՈՆՈՎ, և ոչ թէ պարզապէս «Հին Միւռնով»:

Երկրորդ նկատողութիւնս նորելով, այսպէս կոչուած Ջրօրհնէքի կարգ մը կատարելու մասին է, անշուշտ բարի նպատակ ունենալով հազարաւոր հաւատացեալներուն միւռնաթափ ջուրին միջոցաւ զանոնք դարձնելու մասնակից Նորօրհնեալ Սրբալոյս Միւռնին: Այդ մասին ոչ մէկ առարկութիւն՝ հակառակ անոր որ մինչեւ այս տարւոյն Միւռնի Օրհնութիւնը նման բան չէր կատարուած: Այս նորաձեւութիւն մըն է ինքնին: Հարցը ՋՐՕՐՀՆԷՔ բառը օգտագործելն է անոր հասարակ իմաստ մը տալով, երբ ան միայն ու միայն կը պատկանի Ս. ԾՆՆԴԵԱՆ ՋՐՕՐՀՆԷՔԻՆ՝ ի յիշատակ մեր Տիրոջ Սուրբ Սկրտութեան Յորդանան գետին մէջ՝ ձեռամբ Յովհաննէս Սկրտիչին:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Մատեաններուն մէջ, «Ժամագիրք», «Մաշտոց», «Ճաշոց», միայն մէկ անգամ Ջրօրհնէք կատարել հրահանգուած է, և բառը ըստ կանոնի մէկ անգամ միայն գործածուած է, և այն ալ միայն Ս. Ծննդեան Պատարագի աւարտին՝ Յունուար 6-ին: Իմաստութիւնն է այդ մեր նախնեաց, ուրկէ մեզի կը հասնի այն լռելեայն հրահանգը թէ չնուագեցնել Յիսուսի Մկրտութեան սրբազան խորհուրդը, Ջրօրհնէք եզրաբանութիւնը այլ պարագաներու եւս յարմարցնելով: Կայ սակայն անոր արդէն իսկ պատրաստ միջոցը, չգրկել հաւատացեալները և սակայն կատարելով արդէն իսկ մեր «Մաշտոց»ին մէջ նշանակուած ԽԱՉԱՀԱՆԳԻՍԸ: Հայ Եկեղեցւոյ «Մաշտոց»ը կամ «Ծիսարան»ը հաւատացեալներու յատուկ Խաչահանգիստ կանոնակարգը հաստատած է, ուր կան յատուկ ընթերցուած և աղօթք, Ս. Խաչը ջուրին մէջ գետեղելէ ետք, որուն վերջաւորութեան, ինչպէս նշուած է, Սուրբերու Մատուցներով, եթէ կան, օրհնել ջուրը, և ապա Միւռնաթափ կատարել՝ հիմնապէս հաւատացելոց առողջութեան և հիւանդութեանց բժշկութեան համար, և ոչ անպայման Նոր Միւռնը «ներկայացնելու» միտքով: Յարմարագոյն կերպն է Խաչահանգիստի կարգով, որ պատրաստ է արդէն, կատարել ինչ որ կը միտի Նոր Միւռնի պարագային, առանց գործածելու Ջրօրհնէք յատկաբանութիւնը, որ ինչպէս կրկնապէս ըսուեցաւ, կը վերապահուի մի միայն մեր Տիրոջ Սկրտութեան՝ տարին մէկ անգամ միայն:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԱՐԵՒՍՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԺՁ. - ԺԷ. ԴԱՐԵՐՈՒՆ

Աստուածաշունչ Մատեանի Տպագրութեան
350-ամեակ (1666-2016)

Զատեն Ա. Քինյ. Արգումանեան

Ա.- Վերածնունդ

Նոր Տարին պիտի նշէ հայերէն Աստուածաշունչ Մատեանի առաջին տպագրութեան 350-ամեակը, որ Աստուծոյ պարգեւը եղաւ հայ ժողովուրդին Եւրոպայի մէջ ծնունդ առած վերածնունդին որպէս արգասիք՝ ձեռամբ Ռսկան Վարդապետ Երեւանցիի:

Արդարեւ, ԺՁ. եւ ԺԷ. դարերուն Եւրոպայի վերածնունդը համաշխարհային զարթոնքի պատուաբեր արդիւնքը պարգեւեց մարդկութեան, ընդ որս նաեւ Հայ ժողովուրդին, սակայն Հայաստանէն դուրս, ո՛չ հայրենի հողին վրայ, այլ Եւրոպական վեց վայրերու մէջ՝ Վենետիկ, Ամսթերտամ, Հռոմ, Ջուդայ, Կ. Պոլիս եւ Մարսիլիա՝ քաղաքական դժիւն պարագաներու բերումով: Հայաստան կռուախնձոր դարձած էր թուրք եւ պարսիկ ներխուժումներու հետեւանքով, եւ Ս. Էջմիածնէն երկու Կաթողիկոսներ Ստեփանոս Սալմաստեցի (1545-1567) և Միքայէլ Սեբաստացի (1567-1576), կրկին անգամներ Եւրոպա նուիրակներ ուղարկած էին ազատագրութեան համար օգնութիւն մը որոնելու միտքով: Նուիրակներէն Աբգար Եղոկիացի և որդին Սուրբանշահ Վենետիկ հասնելով, քաղաքական խնդրին աննպաստ ելքն ալ տեսնելով, չյուսահատեցան, այլ զբաղեցան հայերէն նախնագոյն տպագրութեան աւելի մնայուն գործով: Ապարդիւն մնացած այդ բանակցութեանց աւելի ուշ ստացուած արդիւնքը Իսրայէլ Օրիի յայտնութիւնը եղաւ որ դուռ բացաւ ապագայի Ռուսական Կայսրութեան և Հայաստանի մերձեցման:

Բ.- Առաջին Տպագրութիւններ

Գերմանիոյ մէջ Եոհան Կիլքենպերկի 1450 թուականի գիտով գիրքի տպագրութիւնը հսկայ քայլ մը յառաջացուցած էր համամարդկային քաղաքակրթութեան մէջ, որմէ 62 տարի-